Հ Ա Շ Վ Ե Տ Վ ՈՒ Թ Յ ՈՒ Ն

2026թ. մայիսի 13-ից մինչև հունիսի 17-ը Ճապոնիա (Տոկիո և Սապպորո) կատարած գործուղման արդյունքների մասին

1. **ԳՈՐԾՈՒՂՎԱԾ ԱՆՁ**

   Անժելա Փիլոյան

   ԶԲԱՂԵՑՐԱԾ ՊԱՇՏՈՆԸ

   ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության տեղական ինքնակառավարման քաղաքականության վարչության տեղական ինքնակառավարման հարցերի համակարգման բաժնի գլխավոր մասնագետ

2. **ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ՎԱՅՐԸ և ԺԱՄԿԵՏՆԵՐԸ**

   Ճապոնիա (Տոկիո և Սապպորո), 2026թ. մայիսի 13-ից մինչև հունիսի 17-ը

3. **ՀՐԱՎԻՐՈՂ ԿՈՂՄԸ**

   Ճապոնիայի միջազգային համագործակցության գործակալություն (JICA)

4. **ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ՆՊԱՏԱԿԸ (ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ Ո՞Ր ԽՆԴՐԻ ԼՈՒԾՄԱՆ ՀԱՄԱՐ ԷՐ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ԳՈՐԾՈՒՂՈՒՄԸ)**

   Մասնակցություն «Համապարփակ տարածաշրջանային զարգացման նախագծում և կառավարում. տարածքային հավանական ներուժի իրացման մոտեցումներ» խորագրով դասընթացին:

5. **ՔՆՆԱՐԿՎԱԾ ԹԵՄԱՆԵՐԸ**

Գործուղման ընթացքում ներկայացվել են հետևյալ թեմաները.

- Տարածաշրջանային զարգացումը Ճապոնիայում, ազգային զարգացման պլանավորումից մինչև համայնքային զարգացում:
- Ներկայացվել է Հոկայդոյի համապարփակ զարգացման ծրագիրը և դրա ձևավորման գործընթացը:
- Ներկայացվել է Ճապոնիայի պետական կառավարման համակարգի ընդհանուր նկարագիրը:

- Ներկայացվել է Ազգային տարածքային զարգացման ռազմավարությունը, դրա իրականացման գործընթացը, մոնիթորինգի և գնահատման մեխանիզմները և Հոկայդոյի տարածաշրջանային պլանավորման գործընթացը:
- Ներկայացվել է Հոկայդոյի տարածաշրջանային զարգացման բյուրոյի գործունեությունը և բյուրոյի դերը տեղական ինքնակառավարման համակարգում՝ տարածաշրջանային զարգացման քաղաքականությունների մշակման և իրականացման գործում:
- Ներկայացվել է ճանապարհամերձ տարածքների զարգացման և կառավարման մեխանիզմները և դրանց դերը տեղական արտադրանքի իրացման և զբոսաշրջության զարգացման գործընթացում:
- Ներկայացվել է Հոկայդոյում գյուղատնտեսական նշանակության հողերի բարելավման և տարածաշրջանային զարգացման քաղաքականությունը:
- Ներկայացվել է տարածաշրջանային զարգացման ոլորտում խնդիրների վերլուծության և առաջնահերթությունների սահմանման մեթոդաբանությունը:
- Ներկայացվել է համայնքային մասնակցության, քաղաքացիական մասնակցության և հանրային ձեռքբերումների մեխանիզմները:
- Տեղի է ունեցել քննարկում տեղական զարգացման ծրագրերի վերաբերյալ **և** ուսումասիրվել է գյուղատնտեսության դերը Հոկայդոյի զարգացման գործում:

6. <u>ՀԱՆԴԻՊՈՒՄՆԵՐԸ. ԵԼՈՒՅԹՆԵՐԸ. ԲԱՐՁՐԱՑՎԱԾ ԿԱՄ ՔՆՆԱՐԿՎԱԾ ՀԱՐՑԵՐԸ</u>

Դասընթացի ընթացքում կազմակերպվել են մի շարք ճանաչողական և ուսումնական այցեր և հանդիպումներ.

- Այցելություն Ճապոնիայի Հողերի, ենթակառուցվածքների, տրանսպորտի և զբոսաշրջության նախարարություն, Հոկայդոյի տարածաշրջանային բյուրո և հանդիպում բյուրոյի գլխավոր տնօրենի տեղակալի հետ:
- Ճանաչողական այց «Ասակուսա և Տոկիոյի ջրամատակարարման պատմական թանգարան»:
- Այցելություն «Կայտակու նո Մուրա»՝ Հոկայդոյի պատմական գյուղ-թանգարան:
- Այցելություն Հոկայդոյի տարածաշրջանային զարգացման բյուրո և հանդիպում բյուրոյի գլխավոր տնօրենի հետ:
- Այցելություն Կիտահիրոշիմայի քաղաքապետարան և հանդիպում քաղաքապետի հետ, որի շրջանակում ներկայացվել է համայնքային զարգացումը Կիտահիրոշիմայում:
- Ճանաչողական այց «Hokkaido Ballpark F Village» սպորտային և ժամանցային համալիր և հանրային տարածքներ:

- Այցելություն «Ուպոպոյ. Այնու ժողովրդի ազգային թանգարան և այգի», որի շրջանակում ծանոթացել ենք այնու ժողովրդի մշակույթին:
- Այցելություն Տոկիոյի համալսարան, որի շրջանակներում համալսարանի ուսանողների հետ քննարկվել է Սապպորո քաղաքի տարածաշրջանային զարգացումը և ուսանողներին ներկայացրել եմ Հայաստանի փորձը:
- Այց Սապպորոյի քաղաքացիական աղետների կանխարգելման կենտրոն, որտեղ ունեցանք փորձառություններ արտակարգ իրավիճակներում արձագանքողականության վերաբերյալ:
- Այցելություն Նումատայի քաղաքապետարան և հանդիպում Նումատա քաղաքապետարանի աշխատակազմի ներկայացուցիչների հետ, որի շրջանակում ներկայացվել է «The Compact Eco-Town» **հայեցակարգը** և իրականացվել է քաղաքի ենթակառուցվածքների ուսումնասիրություն:
- Այցելություն Տակիկավայի քաղաքապետարան և հանդիպում փոխքաղաքապետի հետ, որի շրջանակում ներկայացվել է համայնքային զարգացման փորձը և «Տակիկավա քաղաքի գյուղատնտեսության ընդհանուր նկարագիրը, ապագա ֆերմերների վերապատրաստման և համայնքի կողմից տրամադրվող աջակցության մեխանիզմները և տեղի է ունեցել գործնական այց ֆերմերային տնտեսություն՝ ծանոթանալու հաջողված օրինակին:
- Այց **«Մոերենումա այգի»**, որի շրջանակներում ծանոթացել եմ ձյան պահեստավորման աշխատանքներին:
- Michi-no-Eki (ճանապարհային սպասարկման կայան) գաղափարն ուսումնասիրելու նպատակով «Օտոֆուկե» ճանապարհամերձ սպասարկման կայան: Օտոֆուկե քաղաքում իրականացվել է այցելություն գյուղատնտեսական կոպերատիվներ:
- Այցելություն Օբիհիրո քաղաքի գործարաններ՝ ծանոթանալու տեղական արտադրանքի ձևավորման, բրենդավորման և մարքեթինգի գործընթացներին:

7. **<u>ՀԱՆԴԻՊՄԱՆ ԿԱՄ ՀԱՎԱՔԻ ԺԱՄԱՆԱԿ ԸՆԴՈՒՆՎԱԾ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ. ՊԱՅՄԱՆԱՎՈՐՎԱԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ. ՍՏՈՐԱԳՐՎԱԾ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԸ</u>**

Գործուղման ընթացքում պաշտոնական որոշումներ չեն կայացվել, փաստաթղթեր չեն ստորագրվել: Դասընթացի ավարտին մասնակիցներին տրվել են վկայականներ:

8. **<u>ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ. ԴՐԱՆՑ ԸՆԹԱՑՔ ՏԱԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԱՌԱՋԱՐԿՆԵՐԸ՝ ԵՂԱՆԱԿԸ. ՁԵՎԸ. ԺԱՄԿԵՏՆԵՐԸ. ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒՆԵՐԸ. ԱԿՆԿԱԼՎՈՂ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ</u>**

- Այցելություն «Ուպոպոյ. Այնու ժողովրդի ազգային թանգարան և այգի», որի շրջանակում ծանոթացել ենք այնու ժողովրդի մշակույթին:
- Այցելություն Տոկիոյի համալսարան, որի շրջանակներում համալսարանի ուսանողների հետ քննարկվել է Սապպորո քաղաքի տարածաշրջանային զարգացումը և ուսանողներին ներկայացրել եմ Հայաստանի փորձը:
- Այց Սապպորոյի քաղաքացիական աղետների կանխարգելման կենտրոն, որտեղ ունեցանք փորձառություններ արտակարգ իրավիճակներում արձագանքողականության վերաբերյալ:
- Այցելություն Նումատայի քաղաքապետարան և հանդիպում Նումատա քաղաքապետարանի աշխատակազմի ներկայացուցիչների հետ, որի շրջանակում ներկայացվել է «The Compact Eco-Town» **հայեցակարգը** և իրականացվել է քաղաքի ենթակառուցվածքների ուսումնասիրություն:
- Այցելություն Տակիկավայի քաղաքապետարան և հանդիպում փոխքաղաքապետի հետ, որի շրջանակում ներկայացվել է համայնքային զարգացման փորձը և «Տակիկավա քաղաքի գյուղատնտեսության ընդհանուր նկարագիրը, ապագա ֆերմերների վերապատրաստման և համայնքի կողմից տրամադրվող աջակցության մեխանիզմները և տեղի է ունեցել գործնական այց ֆերմերային տնտեսություն՝ ծանոթանալու հաջողված օրինակին:
- Այց **«Մոերենումա այգի»**, որի շրջանակներում ծանոթացել եմ ձյան պահեստավորման աշխատանքներին:
- Michi-no-Eki (ճանապարհային սպասարկման կայան) գաղափարն ուսումնասիրելու նպատակով «Օտոֆուկե» ճանապարհամերձ սպասարկման կայան: Օտոֆուկե քաղաքում իրականացվել է այցելություն գյուղատնտեսական կոպերատիվներ:
- Այցելություն Օբիհիրո քաղաքի գործարաններ՝ ծանոթանալու տեղական արտադրանքի ձևավորման, բրենդավորման և մարքեթինգի գործընթացներին:

7. **<u>ՀԱՆԴԻՊՄԱՆ ԿԱՄ ՀԱՎԱՔԻ ԺԱՄԱՆԱԿ ԸՆԴՈՒՆՎԱԾ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ. ՊԱՅՄԱՆԱՎՈՐՎԱԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ. ՍՏՈՐԱԳՐՎԱԾ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԸ</u>**

Գործուղման ընթացքում պաշտոնական որոշումներ չեն կայացվել, փաստաթղթեր չեն ստորագրվել: Դասընթացի ավարտին մասնակիցներին տրվել են վկայականներ:

8. **<u>ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ. ԴՐԱՆՑ ԸՆԹԱՑՔ ՏԱԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԱՌԱՋԱՐԿՆԵՐԸ՝ ԵՂԱՆԱԿԸ. ՁԵՎԸ. ԺԱՄԿԵՏՆԵՐԸ. ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒՆԵՐԸ. ԱԿՆԿԱԼՎՈՂ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ</u>**

Դասընթացի ավարտին սահմանված կարգով ներկայացրել եմ ուսումնասիրության հաշվետվություն, որտեղ Հայաստանի տարածաշրջանային զարգացման և տեղական ինքնակառավարման ոլորտները, առկա մարտահրավերները և ընթացիկ բարեփոխումները ներկայացնելուն զուգահեռ, ներկայացրել եմ դասընթացի ընթացքում ձեռք բերած գիտելիքները և Ճապոնիայի փորձը Հայաստանում կիրառելու և տեղայնացնելու հնարավորությունները: Դասընթացի կազմակերպիչների և համակարգողների կողմից առաջարկվել է Հայաստան վերադառնալուց հետո հետագա համագործակցության նպատակով դիմել Ճապոնիայի միջազգային համագործակցության գործակալության (JICA) ծրագրերին և շահագրգիռ կողմերի հետ կիսվել ձեռք բերած փորձով ու գիտելիքներով:

9. ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ. ԱՄՍԱԹԻՎԸ

Անժելա Փիլոյան

19 հունիսի 2026թ.